

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Լիդիան Բնթերնեյշնլ	ՆԱԽԱԳԻԾ՝ Ամուլսարի ոսկու հանքի ծրագիր, Հայաստան	Աշխատանք № ZT520088	
2016թ. մայիսի 31-ին, հունիսի 1-ին և 2-ին կայացած ԲՄԱԳ-ի հրապարակման վերաբերյալ հանդիպումների արձանագրություն	ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՍԹ-ի կողմից		ԱՄՄԱԹԻՎ՝ 09/06/2016
№	ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ / ԿԱՐԳԱՎԻՃԱԿ		
Ա	<p><b>Հանդիպումների կառուցվածքը</b>  Բոլոր հանդիպումները մեկնարկեցին Ուորդել Արմսթրոնգ Բնթերնեյշնլ ընկերության ներկայացուցիչ՝ գիտությունների դոկտոր Դեյվիդ Բրիգնալի ներկայացրած պրեզենտացիաներով: Նշենք, որ Ուորդել Արմսթրոնգ Բնթերնեյշնլ ընկերությունը բնապահպանության գծով գնահատման անկախ փորձագետների խումբ է, որը կազմել և համակարգել է Ամուլսարի Ծրագրի ԲՄԱԳ-ը:</p> <p><b>Նշումներ</b>  Պրեզենտացիան տեղում թարգմանվում էր անգլերենից հայերեն. բոլոր մասնակիցներին տրամադրվել էին ականջակալներ: Հայերենով ներկայացվող հարցերը թարգմանվում էին անգլերեն:</p> <p><b>Հավելվածներ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ցուցադրված պրեզենտացիայի սլայդերի կրկնօրինակը</li> <li>Յուրաքանչյուր հանդիպման մասնակիցների գրանցամատյանը</li> </ol> <p><b>Հասցեականներ</b>  Ծրագիր – Ամուլսարի ոսկու հանքի ծրագիր  ԴԱԼ – Դատարկ ապարների լցակույտ  ԿՏՏ – Կույտային տարրավազման հրապարակ  ՊՄՏ – Պասիվ մաքրման համակարգ</p>		
Բ	<b>Պրեզենտացիայի արձանագրություն</b>		
	Ներածություն		
	<p>ԱՄ-ն ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց պրեզենտացիայի կառուցվածքը, որը ԴԲ-ն պատրաստվում էր ներկայացնել: ԱՄ-ն պարզաբանեց ԲՄԱԳ-ի և ՇՄԱԳ-ի միջև տարբերությունը՝ նշելով, որ ՇՄԱԳ գործընթացը նախատեսվում է Հայաստանի օրենսդրությամբ, իսկ ԲՄԱԳ-ը իրականացվում է միջազգային պահանջների շրջանակներում: ԱՄ-ն նշեց, որ ՇՄԱԳ-ը հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից 2016թ. ապրիլին:</p> <p>ԱՄ-ն ներկայացրեց ԴԲ-ին և Ուորդել Արմսթրոնգ ընկերությունը, որը 2006թ. ներգրավված է Ծրագրի աշխատանքներում: ԱՄ-ն պարզաբանեց, որ ԴԲ-ի պրեզենտացիայում ցույց են տրված 2015թ. վերջում իրականացված Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացման արդյունքում տեղի ունեցած Ծրագրի նախագծի փոփոխությունները:</p> <p>ԱՄ-ն հանդիպման մասնակիցներին տեղեկացրեց, որ պրեզենտացիայի վերջում ժամանակ կհատկացվի առաջացող հարցերին պատասխանելու համար:</p>		
Գ	<i>Պրեզենտացիա. 2015թ. հուլիսից հետո կատարված փոփոխությունները Ծրագրում և ԲՄԱԳ-ում</i>		

ԴԲ-ն ներկայացավ և նշեց, որ պրեզենտացիան նկարագրում է 2015թ. հուլիսին տեղի ունեցած ԲՄԱԳ-ի հրապարակման վերջին իրադարձություններից հետո Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացման արդյունքում կատարված Ծրագրի տեղամասի նախագծի փոփոխությունները: ԴԲ-ն նշեց, որ փոփոխությունները ներկայացնելուց հետո, նա կմեկնաբանի նաև, թե ինչպես են նշված փոփոխությունները ազդել ԲՄԱԳ-ի վրա, և հավանական բնապահպանական ազդեցությունների ինչ փոփոխություններ են տեղի ունեցել:

Առաջին սլայդները ներկայացնում էին ընդհանուր տեղեկություններ հետևյալը նկարագրող պլանների վերաբերյալ.

- Տեղամասի տեղադիրքը և կապը շրջակա բնակավայրերի և Արփա և Որոտան գետերի հետ
- Բաց եղանակով շահագործվող ոսկու և արծաթի հանքավայրերը գտնվում են Էրատո, Արտավազդես և Տիգրանես գագաթներին
- Ոսկու հանքանյութ չպարունակող ապարների մեծ մասը կտեղափոխվի ԴԱԼ, որը հանքի վերականգնումից հետո մշտապես կմնա որպես տեղանքի տարր
- Մանրացված ապարը դեպի ԿՏՀ տեղափոխելու համար կօգտագործվի փոխակրիչ
- Արդյունահանված ապարը կմանրացվի, այնուհետև կկուտակվի և կմշակվի ցիանիդի նոսր լուծույթով: Այս գործընթացի վերջում կկորզվի ոսկի և արծաթ
- Կենսաբազմազանության անձեռնմխելի տարածքի առանձնացում Տիգրանես և Արտավազդես բացահանքերի հարավ-արևմուտքում
- Ընդհանուր 1300 աշխատատեղերի ստեղծում շինարարության ընթացքում և մոտավորապես 650 աշխատատեղ՝ շահագործման փուլում
- Շինարարությունը նախատեսվում է սկսել այս ամիս և ավարտել 2018թ. գարնանը
- Ակնկալվում է կորզել մոտավորապես 2, 2 մլն. ունցիա ոսկի
- ՀՀ Կառավարությանը Ծրագրի վճարած հարկերն ու տուրքերը կկազմեն մոտ 485 մլն. ԱՄՆ դոլար
- Ծրագրի տեղամասի շրջակա համայնքներում իրականացվող ծրագրերի համար Ծրագրի տարեկան հատկացումները կազմում են մոտ 400 000 ԱՄՆ դոլար
- ՄՖԿ-ն և ՎԶԵԲ-ը հանդիսանում են Ծրագրի բաժնետերեր, և Լիդիան Ինթերնեյշնլ ընկերությունը պարտավորվել է հետևել նրանց կողմից պահանջվող բնապահպանական և սոցիալական չափանիշներին:

Սլայդերը ներառում էին նաև տեղամասի հատակագծերը, արբանյակային պատկերներ և տեղամասի լուսանկարներ

ԴԲ-ն ներկայացրեց վերը նշված փոփոխությունների հակիրճ նկարագիրը.

- Հանքատար ճանապարհների տեղադրությունը
- Կոնտակտային ջրերի կառավարում
- Ռեզերվային հանքափոսերից վերցվող անհրաժեշտ նյութի կրճատում
- ԴԱԼ-ի վերանախագծում
- Մանրացման գործընթացի վերանախագծում
- Փոխակրիչի ծրագծի վերանախագծում, որն այժմ 1,5 կմ-ով կարճ է
- ԿՏՀ-ին առնչվող որոշ ենթակառուցվածքների տեղադիրքի փոփոխություն

Հանքատար ճանապարհների փոփոխության հետ կապված ԴԲ-ն պարզաբանեց, որ փոխվել է բացահանքերի և ԴԱԼ-ի միջև ընկած ճանապարհի ծրագիծը: Այն այժմ անցնում է լեռան արևմտյան մասով, որը կբարելավի տեղամասում աշխատանքների արդյունավետությունը: ԴԲ-ն նկատեց, որ այս փոփոխության արդյունքում կրճատվել է նաև արդյունահանվող տարածքներից դուրս գտնվող ռեզերվային հանքափոսերից վերցվող նյութի պահանջարկը: ԴԲ-ն նշեց, որ առավել շատ քանակությամբ ապարանյութեր կօգտագործվեն հանքատար ճանապարհների շինարարության համար, իսկ մնացածը կտեղադրվի ԴԱԼ-ում, արդյունքում կրճատելով ԴԱԼ-ի չափերը:

ԴԲ-ն պարզաբանեց, որ կոնտակտային ջրերի կառավարման հետ կապված տեղամասի նախկին նախագծով նախատեսվում էր տեղամասից դեպի Որոտան գետի ավազան հոսքաջրերի սահմանափակ քանակություն: ԴԲ-ն ավելացրեց, որ հանքատար ճանապարհի նախագծի փոփոխման արդյունքում կոնտակտային բոլոր ջրերը բաց կթողնվեն Արփա գետի ավազան և նախքան տեղամասից բաց թողնվելը կմշակվեն: Ստորգետնյա ջրերի հետ կապված ԴԲ-ն նշեց, որ կատարվել են ուսումնասիրություններ և գնահատում, ինչի արդյունքում հաստատվել է, որ Ծրագրի գործողությունների հետևանքով ազդեցություն կրող ստորերկրյա ջրերի գոտին կապված չէ Ջերմուկի

ՉՉալցման գործարանին մատակարարվող ջրերի գոտու հետ:

ԴԲ-ն հակիրճ բացատրեց, թե ինչ է իրենից ներկայացնում ԴԱԼ-ը և դրա գործառնությունները: Նա նշեց, որ հանքատար ճանապարհների ծրագրի փոփոխությամբ պայմանավորված այժմ ԴԱԼ-ը չափերով ավելի փոքր է: ԴԲ-ն ընդգծեց շահագործման 1-ին և 6-րդ տարում ԴԱԼ-ի չափերի և նախագծի փոփոխությունը: Նա ցույց տվեց նաև Ջերմուկի ճոպանուղու վերնի հատվածից երևացող վերականգնված ԴԱԼ-ի ֆոտոմոնտաժը: ԴԲ-ն ավելացրեց, որ ԴԱԼ-ի նախագիծը փոփոխվել է այնպես, որ հնարավորություն կլինի տեղադրել հետագայում տեղամասի շահագործման ընթացքում արդյունահանված ցածր պարունակությամբ հանքաքարի կույտը:

Ջարդիչի նախագծի փոփոխության հետ կապված ԴԲ-ն մեկնաբանեց, որ մանրացման երեք փուլը փոխվել է երկու փուլի: ԴԲ-ն նկատեց, որ մանրացումը տեղի է ունենում հանգույցի ներսում, որը կապահովի աղմուկի մեկուսացում և փոշու տարածման կանխում: ԴԲ-ն ավելացրեց, որ Ջարդիչ հանգույցը տեղափոխվել է դեպի ներքև, որը կնվազեցնի հանգույցի տեսանելիությունը, սակայն այն դեռևս տեսանելի կլինի Ջերմուկի ճոպանուղուց: Նա ցույց տվեց նաև ֆոտոմոնտաժը նշված կետից:

ԴԲ-ն նշեց նաև, որ ԴԱԼ-ի նախագծի փոփոխություններից բացի, ԴԱԼ-ին և Ջարդիչ կայանին առնչվող մի շարք շինություններ (սանիտարակենցաղային, տեխնասարկման և գրասենյակային տարածքներ) այժմ տեղափոխվել են ներքև: Նախագծի այս փոփոխման արդյունքում կնվազի այս կառույցների վիզուալ ազդեցությունը:

Ծրագրի նախկին նախագծով դեպի ԿՏՀ հանքաքարը տեղափոխող փոխակրիչը գտնվում էր գետնից բարձր, սակայն հիմա այն կգտնվի գետնի մակարդակի վրա: ԴԲ-ն հստակեցրեց, որ փոխակրիչի նախագծի նախկին տարբերակը դրա տակով ազատ անցնելու հնարավորություն էր տալիս: Նա ավելացրեց, որ փոխակրիչը արգելքներ կստեղծի, այդիսկ պատճառով նախագծում նախատեսվում է չորս անցումների առկայություն, որը հնարավորություն կտա մեքենաներին և հովիվներին կտրել-անցնել փոխակրիչը: ԴԲ-ն ներկայացրեց փոխակրիչի նախկին ծրագրից, որը կես ճանապարհին փոխում էր ուղղությունը: Նոր ծրագրից այժմ ուղիղ է և ուղղությունը դեպի բեռնման տեղամաս ավելի ուղիղ է:

ԿՏՀ-ի հետ կապված ԴԲ-ն հակիրճ ներկայացրեց հանգույցում տեղի ունեցող կոնկրետ գործընթացները՝ պարզաբանելով, էթե ինչպես է ցիանիդի նոր լուծույթն օգտագործվում ոսկին ու արծաթը կորզելու համար: ԴԲ-ն ընդգծեց, որ ԿՏՀ-ի հանգույցներից մի քանիսն (մետաղի մշակման գործարանը, կուտակման ավազաններն ու հեղեղաջրերի ավազանները) այժմ տեղափոխվել են դեպի հարավ, մինչդեռ տարրավազման հարթակը մնում է իր տեղում: ԴԲ-ն ավելացրեց, որ փոփոխության արդյունքում նոր հատակագիծը նախատեսում է տեղամաս մտնելու միայն մեկ ճանապարհ:

ԴԲ-ն բացատրեց ԴԱԼ-ի վերականգնումից հետո ջրերի պասիվ մաքրման համակարգի էությունը: 5-րդ տարուց հետո, երբ ԴԱԼ-ում արդեն կլինի բուսականություն, լցակույտում հավաքված ջուրը կսնուցվի մի շարք մշակման ավազանների միջով նախքան Արփա գետի ջրհավաք ավազան թափվելը: Մշակման ողջ գործընթացի ժամանակ ջուրը կստուգվի՝ համոզվելու, որ համակարգը անխափան է գործում և համապատասխանում է պահանջվող չափանիշներին: ԴԲ-ն հաստատեց, որ մշակման գործընթացի բոլոր փուլերում կլինի արձագանքման հնարավորություն՝ ապահովելու, որ ոչ մի չմշակված ջուր դուրս չիոսի: Նա ավելացրեց, որ հետագայում փորձարկում կիրականացվի մշակման հանգույցների պատշաճ չափը սահմանելու համար:

ԴԲ-ն ներկայացրեց փոփոխված Ծրագրի զբաղեցրած տարածքի ազդեցությունը կրող տարածքների նկարագրությունը՝ նշելով, որ Ծրագրի ենակառուցվածքների անմիջական ազդեցության տարածքի մակերեսը կազմում է 595 հա: ԴԲ-ն ավելացրեց, որ Ծրագրի գործողությունների հետևանքով խախտվող (օրինակ՝ պայթեցումներից կամ աղմուկի ազդեցությունից) կամ սահմանափակ մուտքի հնարավորությամբ տարածքները կազմում են ընդհանուր առմամբ 1765 հա: Դրանց մակերեսը կարող է փոխվել շինանարության ընթացքում զբաղեցրած տարածքով պայմանավորված:

<p>Դ</p>	<p><i>Պրեզենտացիա. Շահագրգիռ կողմերի ներգրավման և հրապարակման ժամանակացույց</i></p> <p>Պրեզենտացիայի այս բաժինը ԴԲ-ն եզրափակեց՝ մասնակիցներին տեղեկացնելով, որ նշված փոփոխությունները ընդգրկվել են ԲՄԱԳ-ի փոփոխված տարբերակում, որին կարելի է ծանոթանալ Գնդեվազում Ամուլսարի տեղեկատվական կենտրոնում, ինչպես նաև Գեոթիմի ինտերնետային կայքում և Գեոթիմի երևանյան գրասենյակում: ԴԲ-ն ավելացրեց, որ ամբողջ ԲՄԱԳ-ը հասանելի կլինի նաև ՎՋԵԲ-ի պաշտոնական կայքում: ԴԲ-ն մասնակիցներին խորհուրդ տվեց մասնավորապես ընթերցել Ոչ տեխնիկական ամփոփագիրը, քանի որ այն լավ միջոց է համեմատաբար արագ ծանոթանալ Ծրագրի:</p> <p>ԴԲ-ն հաստատեց, որ ԲՄԱԳ-ը համապատասխանում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Հավասարության (Էկվատորի) սկզբունքներին և ՎՋԵԲ-ի ու ՄՖԿ-ի պահանջներին: ԴԲ-ն ավելացրեց, որ 2009թ. սկսած անցկացվել են մի շարք հանդիպումներ հանրության հետ, և որ համայնքների կապերի կոմիտեն կշարունակի նմանատիպ հանդիպումներ անցկացնել Ծրագրի շահագործման ընթացքում: Ծրագրի վերաբերյալ թարմ տեղեկություններ պարբերաբար կտեղադրվեն Գեոթիմի կայքում և Գնդեվազում Ամուլսարի տեղեկատվական կենտրոնում:</p> <p>ԴԲ-ն կրկին հիշեցրեց, որ հրապարակման այս փուլի նպատակն է վստահ լինել, որ յուրաքանչյուրը տեղյակ է Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացման արդյունքում տեղի ունեցած նախագծի փոփոխությունների մասին:</p> <p>ԴԲ-ն պարզաբանեց, որ ստեղծվել է համայնքների հետ կապերի կոմիտե, որի կազմում են ամենատարբեր ոլորտի տեղի բնակիչներ: ԴԲ-ն ավելացրեց, որ ամսական կտրվածքով տեղի բնակիչներին ուղարկվում է պարբերականի 1000 օրինակ:</p>
<p>Ե</p>	<p><i>Պրեզենտացիա. Հավանական ազդեցությունները, որոնք գնահատվել են ԲՄԱԳ-ի 10-րդ տարբերակի համար</i></p> <p>ԴԲ-ն ներկայացրեց պրեզենտացիայի մնացած հատվածը, որը հակիրճ նկարագրում է ԲՄԱԳ-ի ստացված արդյունքների փոփոխությունները, ներառելով հետևյալ կարևոր թեմաները</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ջրային ռեսուրսներ</li> <li>- Լանդշաֆտ</li> <li>- Հողի օտարում և սահմանափակ մուտքի հնարավորություն</li> <li>- Սոցիալ-տնտեսական (ներառյալ՝ աշխատողների բնակեցումը)</li> <li>- Աղմուկ և փոշի</li> <li>- Առողջապահություն</li> <li>- Կենսաբազմազանություն</li> </ul> <p>Ջրային ռեսուրսների հետ կապված ԴԲ-ն հաստատեց, որ ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունների փոփոխություններ չկան, մասնավորապես նշելով, որ Ծրագրի գործողությունների ազդեցության գոտում գտնվող ստորգետնյա ջրերը կապված չեն Ջերմուկի հանքային ջրերի հետ, և որ հանքի մշակման ոչ մի հանգույց ընկած չէ Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում:</p> <p>ԴԲ-ն նշեց, որ մակերևութային ջրերի հետ կապված Ծրագրում փոփոխությունները կլինեն փոքր և ավելի նպաստավոր՝ ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի տարբերակի համեմատ: ԴԲ-ն կրկին տեղեկացրեց, որ ոչ մի մակերևութային ջուր չի հոսի տեղամասից դեպի Որոտանի ջրհավաք ավազան, և որ ԴԱԼ-ից դուրս եկող ջուրը կմաքրվի պասիվ մաքրման համակարգի միջոցով մինչև Արփա գետի ջրհավաք ավազան թափվելը: Սա մի գործընթաց է, որը տեղի է ունենալու միայն շահագործման հինգերորդ տարուց սկսած: ԴԲ-ն ընդգծեց, որ նախագծի բարելավման արդյունքում, աշխատանքներն իրականացվելու են լեռան վրա մի շարք աղբյուրներից ներքև, ինչը նշանակում է, որ նշված աղբյուրներից ստացվող մակերևութային ջրերը կարող են արդյունավետ կերպով փոխել ուղղությունը տեղամասից և չեն դառնա կոնտակտային ջրեր:</p> <p>Լանդշաֆտի վրա ազդեցությունների հետ կապված ԴԲ-ն նշեց, որ ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի տարբերակի համեմատ տեղի է ունեցել փոքր փոփոխություն, որը թե դրական և թե բացասական ազդեցություն կարող է ունենալ՝ կախված տեսարանի դիրքից: ԴԲ-ն ներկայացրեց, որ բաց եղանակով արդյունահանման հետ կապված երեք լեռնագագաթների (Էրատո, Արտավազդես, Տիգրանես) հեռացումը և ԿՏՀ-ն ու ԴԱԼ-ը մշտապես կփոխեն բնապատկերը, ինչը բացասական ազդեցություն է: ԴԲ-ն ավելացրեց, որ շինարարության և շահագործման փուլերում գործարանը և մեքենա-սարքավորումները տեսանելի կլինեն մոտակա բնակավայրերից, ինչպես նաև տեսանելի կլինի լուսավորությունը գիշերային ժամերին, որը նույնպես կարող է բացասական ազդեցություն ունենալ:</p>

Հողի օտարման և մուտքի սահմանափակ հնարավորության հետ կապված ԴԲ-ն նշեց, որ նախորդ ԲՄԱԳ-ի համեմատ տեղի է ունեցել մի փոքր փոփոխություն, որն ունեցել է թե դրական, և թե բացասական հետևանք: ԴԲ-ն պարզաբանեց, որ անհրաժեշտ է եղել ձեռք բերել 252 սեփական հողամաս, որոնք հիմնականում ընկած են ԿՏՀ-ի տարածքում: ԴԲ-ն ավելացրեց, որ ևս 22 հողակտոր անհրաժեշտ կլինի ձեռք բերել փոխակրիչի ծրագծի փոփոխությամբ պայմանավորված, և որ ազդակիր հողատերերը կստանան կանխիկ փոխհատուցում կամ հող՝ հողի դիմաց: ԴԲ-ն շեշտեց, որ հովիվներին աջակցություն կցուցաբերվի արածեցման նոր վայրեր հասնելու համար, ինչպես նաև կշարունակվի նրանց մշտադիտարկումը՝ հասկանալու նրանց կենսամիջոցների վրա հավանական ազդեցությունները:

Աշխատակիցների բնակեցման հետ կապված ԴԲ-ն ներկայացրեց շինարարության և շահագործման փուլերում անհրաժեշտ աշխատողների քանակի մի քանի տարբերակ ներկայացնող մի սլայդ (առավելագույնը 1300 աշխատող շինարարության ընթացքում, 400 տեղացի աշխատակից, մոտավորապես 30%): ԴԲ-ն ներկայացրեց աշխատակիցների բնակեցման գնահատման արդյունքները: Գնահատումը ցույց է տվել, որ պահանջվում է հիբրիդ լուծում, այսինքն՝ բնակեցումը կլինի Ջերմուկի հյուրանոցներում և տեղամասում գտնվող ճամբարում: ԴԲ-ն եզրափակեց, որ ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի տարբերակի համեմատ այս առումով փոփոխություն տեղի չի ունեցել, սակայն ելակետային վիճակի վերաբերյալ ստացված տվյալներն ավելացել են:

ԴԲ-ն անդրադարձավ հավանական տեղափոխություններին (աղմուկ, փոշի, վիբրացիա պայթեցումների ժամանակ)՝ նշելով, որ 2015թ. հուլիսի համեմատ փոփոխություն տեղի չի ունեցել: ԴԲ-ն ավելացրեց, որ նախնական մոնիտորինգի նոր վայր է որոշվել, որը կապահովի տեղամասում առաջացող աղմուկի, վիբրացիայի և փոշու մակարդակի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ:

Համայնքային զարգացման և առողջության վրա ազդեցությունների հետ կապված ԴԲ-ն պարզաբանեց, որ ԿՏՀ-ում մետաղի վերամշակման գործարանը Գնդեվազից հեռացնելը դրական փոփոխություն էր ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի տարբերակի համեմատ: ԴԲ-ն հատուկ նշեց Գնդեվազի ջրանցքի վերանորոգման աշխատանքները, որը կբարելավի ջրամատակարարումն ու ռոռոմը Գնդեվազի հյուսիսում: ԴԲ-ն ավելացրեց, որ նախքան աշխատանքները սկսելը նախատեսվում է կազմակերպել բժշկական հերթապահություն, որը կիրականացվի համայնքներում բժշկական հետազոտություններին զուգընթաց: ԴԲ-ն եզրափակեց, որ ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի տարբերակի համեմատ փոփոխությունները քիչ են, և դրանք հիմնականում դրական են համայնքային զարգացման և առողջապահության առումով:

Կենսաբազմազանության հետ կապված ԴԲ-ն նշեց, որ իրականացվել են ելակետային վիճակի նոր ուսումնասիրություններ, որոնք հիմնականում ներառում էին ասիական Գորշ արջի հետազոտությունը, քանի որ այս տեսակը տեղաշարժվում է այն տարածքով, որը հետագայում կսահմանափակվի Ծրագրի գործողություններով պայմանավորված: ԴԲ-ն ներկայացրեց, որ կենսաբազմազանության որոշ ազդեցությունները փոխհատուցելու նպատակով Ջերմուկի հյուսիսում կազմավորվում է փոխհատուցման տարածք: ԴԲ-ն ավելացրեց, որ հանքատար ճանապարհների երթուղու փոփոխությունը ազդեցություն կունենան Մատնունի ծիրանավոր բուսատեսակի վրա, որն անհրաժեշտ կլինի տեղափոխել: ԴԲ-ն նաև նշեց, որ Մատնունի ծիրանավորը տեղափոխվել և տնկվել է Սևանա լճի հյուսիսում գտնվող հերբարիումում: ԴԲ-ն եզրափակեց, որ ԲՄԱԳ-ի նախորդ տարբերակի համեմատ փոփոխությունն աննշան է, որը հիմնականում վերաբերում է Գորշ արջի ելակետային վիճակի ուսումնասիրություններին և Մատնունի ծիրանավորի տեղափոխմանը:

Մշակութային ժառանգության հետ կապված ԴԲ-ն նշեց, որ ԲՄԱԳ-ի 2015թ. հուլիսի համեմատ տեղի է ունեցել փոքր փոփոխություն, և սա վերաբերում է ենթակառուցվածքների զբաղեցրած տարածքի փոփոխություններին, մասնավորապես՝ ԿՏՀ-ին առնչվող շինությունների, փոխակրիչի ծրագծի, ավտոմեքենաների տեխսպասարկման և գրասենյակների մասնաշենքերի տեղափոխությանը: ԴԲ-ն հաստատեց, որ նախնական աշխատանքները մեկնարկելիս ուշադրություն կդարձվի չզննահատված հնագիտական տեղամասերի վրա, և որ պատահական գտածոների ընթացակարգում ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել:

	<i>Պրեզենտացիա. Հաջորդ քայլերը</i>
	ԴԲ-ն պրեզենտացիայի այս հատվածը եզրափակեց՝ մասնակիցներին տեղեկացնելով, որ ԲՄԱԳ-ը կթարմացվի հրապարկման այս հանդիպումից հետո, եթե լինեն հիմնավոր դիտողություններ և առաջարկություններ: Այդ դեպքում թարմացված տարբերակը կրկին կհրապարակվի: ԴԲ-ն նշեց, որ շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2016թ. հունիսից օգոստոսն ընկած ժամանակահատվածում, որը ներառում է ջրագծի աշխատանքները, որը կարելի է տեսնել H 42 ճանապարհից:
	<b>Հարցեր և պատասխաններ Ձերմուկում տեղի բնակիչների համար անցկացված հանդիպումից</b>
	<b>Ամսաթիվ և ժամ.</b> 2016թ. մայիսի 31, երեքշաբթի, ժամը 12.10
	<b>Ձեկուցողներ Գեոթիմի կողմից՝</b> ԴԲ – Դր. Դեյվ Բրիգնալ, Ուորդել Արմսթրոնգ Ինտերնեյշնլ ընկերության Տարածքային տնօրեն (ներկայացնում է հիմնական պրեզենտացիա) ԱՍ – Դր. Արմեն Ստեփանյան, Գեոթիմի Կայուն զարգացման գծով ավագ մենեջեր – (ներկայացնում է մասնակիցներին և պատասխանում հարցերին) ՀԱ – Դր. Հայկ Ալոյան, Գեոթիմի գլխավոր տնօրեն (պատասխանում է հարցերին)
1	<i>Վանիկ Ջոհրայան, Ձերմուկ համայնքի ներկայացուցիչ</i> Ի՞նչ է տեղի ունենալու նախատեսվող Ձերմուկի ազգային պարկի ստեղծման հետ կապված, և արդյո՞ք ազդեցություն կրող տեսակները տեղափոխվելու են տեղամասից դեպի այս տարածք:  ԱՍ-ի պատասխանը. Ձերմուկի ազգային պարկի ստեղծման հարցը դեռևս ակտուալ է, և այն գտնվում է քննարկման վաղ փուլում: Պարկի հիմնադրման ճանապարհային քարտեզը պարզելու նպատակով քննարկումների նոր շրջափուլ է անցկացվում կառավարության հետ: Ազգային պարկի ծրագիրը կիրականացվի առաջիկա մի քանի տարիների ընթացքում:
2	<i>Մյուզաննա Ավետիսյան, Ձերմուկի Երիտասարդության կենտրոնի ղեկավար</i> Ինչպես նշեցիք, ջուրը թափվելու է Արփա գետը: Այդ դեպքում այն ին՝ չ ազդեցություն կունենա Կեչուտի ջրամբարի և Ձերմուկի ջրի որակի վրա: Դուք նշեցիք, որ գնահատականները փոխվել են, ուստի խնդրում եմ հստակեցնել, թե արդյոք խոսքը ավելացման թե պակասեցման մասին է:  ԴԲ-ի պատասխանը. Ջուրն Արփա գետ թափվելու է Կեչուտի ջրամբարից ներքև (հոսանքն ի վար), և հետևաբար նրա վրա ազդեցություն չի կարող ունենալ:  Դատարկելու հետ կապված ԴԲ-ն հղում կատարեց պրեզենտացիայի 17-րդ սլայդին, որը ցույց է տալիս ջրի մաքրման գործընթացի տարբեր փուլերը՝ ներկայացնելով յուրաքանչյուր փուլի նպատակը: ԴԲ-ն հստակեցրեց նաև, որ մաքրումից հետո ջուրն անմիջապես չի թափվի գետը, այն կլցվի կեղտաջրերի համար նախատեսված հորը: ԴԲ-ն կրկին նշեց, որ ջրի որակը կմշտադիտարկվի մաքրման գործընթացի բոլոր փուլերում: ԴԲ-ն հիշեցրեց, որ բացթողումը տեղի կունենա շահագործման միայն հինգերորդ տարուց հետո: Մինչև այդ տեղի կունենա արդյունահանվող ապարի փորձարկում, որը թույլ կտա բարելավել մշակման գործընթացը և ապահովել դրա ճշգրիտ աշխատանքը: ԴԲ-ն նշեց, որ օգտագործվող ջրերի մեծ մասը կշրջանառվի, օրինակ՝ ԿՏՀ-ում, և որ մշտապես առաջնայնությունը տրվում է ջուրը նորից օգտագործելուն: ԴԲ-ն հարցեց, թե արդյոք նա պատասխանեց բարձրացված հարցին, որին հարց տվողը տվեց դրական պատասխան:
3	<i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն (Բոլոր հարցերը տվեց միաժամանակ)</i> Ինչու՞ են Ծրագրի նախագծում կատարվել փոփոխություններ:  ԴԲ-ի պատասխանը. Տեխնիկական խումբն ավելի լավ էր ուսումնասիրել Ծրագիրը և նշել էր շատ հանքարդյունաբերական ծրագրերում ընդունված՝ խնայողություններին ուղղված արդյունավետ միջոցառումներ: ԴԲ-ն ավելացրեց, որ նայելով այս փոփոխություններին զգացինք, որ անհրաժեշտություն կա փոփոխել ԲՄԱԳ-ը և որ այն պետք է կրկին հրապարակել՝ ողջ գործընթացի թափանցիկությունը պահպանելու նպատակով:
4	<i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն</i>

	<p>Դուք նշեցիք, որ ԿՏՀ-ն տեղափոխվել է դեպի հարավ. որքա՞ն հեռու է այն տեղափոխվել և որքա՞ն մոտ է այն գտնվում շրջակա բնակավայրերին:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. ԴԲ-ն հստակեցրեց, որ ԿՏՀ-ն չի տեղափոխվել դեպի հարավ, այլ դրա հարևանությամբ գտնվող ոսկու կորզման (ADR) գործարանն է տեղափոխվել դեպի հարավ: Դրա հիմնական պատճառն այն է, որ ջրօգտագործման համար այն առավել արդյունավետ տարբերակ է:</p>
5	<p><i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն</i> Նշեցիք, որ նվազեցվել է ցիանիդի օգտագործման քանակությունը, հնարավո՞ր է արդյոք ծրագրի շահագործման ողջ ընթացքում օգտագործվող ցիանիդի քանակությունը կրկին անգամ նվազեցվի:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. ԴԲ-ն պարզաբանեց, որ օգտագործվող ցիանիդի պահանջվող քանակությունը կարող է տարբեր լինել տարիների ընթացքում, չնայած, որ այն մշտապես շատ նոսր է լինելու, և այս առումով գործընթացը ԲՄԱԳ-ի նախկին տարբերակների համեմատ չի փոխվել: ԴԲ-ն նշեց նաև, որ ցիանիդն ու դրա օգտագործումը տեղամասում վերահսկելու համար կազմվել է Ցիանիդի կառավարման մանրամասն պլան:</p> <p>ԱՄ-ի պատասխանը. Ցիանիդի պարունակությունները կարող են նվազել ծրագրի շահագործման ընթացքում: ԱՄ-ն կրկին նշեց, որ օգտագործվող ցիանիդի մակարդակը համարվում է շատ ցածր:</p>
6	<p><i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն</i> Սևան տեղափոխված բույսերը չէ՞ին կարող արդյոք տեղափոխվել մեր տարածաշրջանում որևէ տեղ:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. ԴԲ-ն պարզաբանեց, որ Մատնունի ծիրանավորի տեղափոխման նպատակը նմուշներն անվտանգ վայր տեղափոխելն էր: Մատնունի ծիրանավորի մյուս տեղափոխված տեղի կունենա լեռան լանջին, իսկ սերմերը կհավաքվեն բույսերից տեղամասում դրանք օգտագործելու համար:</p> <p>ԱՄ-ի պատասխանը. ԱՄ-ն նշեց, որ տեղափոխված բույսերից միայն 20%-ն է տեղափոխվել Սևան, որը երեք այն վայրերից մեկն է, ուր ՀՀ օրենսդրությամբ թույլ է տրվում տեղափոխել Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, և սա արվել է հիմնականում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների գիտահետազոտական աշխատանքների նպատակով: ԱՄ-ն նշեց, որ իրականացվել է գիտահետազոտական աշխատանք բույսերի ողջ պոպուլյացիայի արդյունավետությունն ապահովելու և Անուլսարում վերականգնման ժամանակ նրանք վերարտադրությանը նպաստելու նպատակով:</p>
7	<p><i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն</i> Երկրաշարժի դեպքում որքա՞ն անվտանգ կլինեն բացահանքերը հանքարդյունահանման հետևանքով տեղի ունեցող փոփոխություններից հետո:</p> <p>ԴԲ-ի պատասխանը ԴԲ-ն պարզաբանեց, որ իրականացվել է սեյսմիկ վտանգի ուսումնասիրություն, որի արդյունքներն օգտագործվել են տեղամասի նախագծում՝ երաշխավորելու կայունությունը: ԴԲ-ն հաստատեց, որ նախագծի համաձայն ԴԱԼ-ն ու ԿՏՀ-ն կլինեն երկրաշարժադիմացկուն: Երկրաշարժի դեպքում ենթակառուցվածքների վրա որևէ զգալի ազդեցություն չի լինի: ԴԲ-ն նշեց, որ բազմաթիվ գործող հանքավայրեր կան, որոնք տեղակայված են սեյսմիկ ակտիվ գոտիներում:</p>
8	<p><i>Մարտուն Թադևոսյան, Գորայքի դպրոցի տնօրեն</i> Տեղացի երիտասարդները շատ են ցանկանում Ծրագրում ներգրավված լինել: Նրանցից մի քանիսը հանքում աշխատելու փորձ ունի: Դուք պատրաստվո՞ւմ եք շարունակել ուսանողների ուսման վարձը վճարելու ծրագիրը: Կրթության ի՞նչ մակարդակ է անհրաժեշտ աշխատանքի ընդունվելու համար:</p> <p>ՀԱ-ի պատասխանը. ՀԱ-ն պարզաբանեց, որ արդեն 5 տարի է ինչ Ընկերությունը ծրագրի շրջանակներում վճարում է 12 ուսանողի ուսման</p>



	<p>վարձը: Հնարավորություններ կտրվեն այդ երիտասարդներին, և նրանցից մի քանիսն արդեն սկսել են աշխատել որպես երկրաբան տեղամասում: ՀԱ-ն նշեց, որ այժմ արդեն լեռնահանքային մասնագետների կարիքը չկա, քանի որ արդեն կան բավարար քանակությամբ մասնագետներ, ուստի ֆինանսավորումը ուղղված կլինի այլ մասնագիտությունների համար:</p>
	<p><i>Մեկնաբանություններ և ամփոփում</i>                  ԱՄ-ն հարցրեց, թե կան արդյոք այլ հարցեր կամ մեկնաբանություններ:                  Երիտասարդության կենտրոնի ներկայացուցիչ Մյուզաննա Ավետիսյանն ասաց, որ անհրաժեշտ է տեղեկատվությունը տարածել ավելի շատ մարդկանց, քանի որ կարծես թե Ջերմուկից շատ ներկայացուցիչ չկա այստեղ:</p> <p>ԱՄ-ն պատասխանեց, որ հրապարակման վերաբերյալ հանդիպման մասին հայտարարվում է ինտերնետային կայքում և ընկերության կողմից հրապարակվող ամսաթերթում: Նախորդ նմանատիպ հանդիպումների համար մոտ 1000 հատ ամսաթերթ է բաժանվել, ոչ շատ մարդիկ ներկայացան: ԱՄ-ն համաձայնեց, որ կուզենային տեսնել ավելի շատ բնակիչների Ջերմուկից, և որ նմանատիպ հանդիպումներ են անցկացվել Գնդեվազում և Գորայքում, կուզենային, որ ավելի շատ հանդիպումներ անցկացվեին Ջերմուկում ևս, այդ իսկ պատճառով առաջարկեց ապագայում նմանատիպ հանդիպումներ կազմակերպելիս ներգրավել այդ կենտրոնի նման կենտրոնների:</p> <p>ԴԲ-ն եզրափակեց՝ նշելով, որ նման մասշտաբի փոփոխություններ կատարվում են բոլոր նախագծերում, և նախագծի և ծախսերի օպտիմալացումը սովորական երևույթ է և արտասովոր բան չկա այստեղ: ԴԲ-ն ավելացրեց, որ սրանք այն փոփոխություններն են, որոնք մեր կարծիքով կարևոր էին ներկայացնելու համար, և հույս ունենք, որ այն, ինչ մենք ներկայացրեցինք ձեզ համար պարզ էր:</p> <p>ԱՄ-ն եզրափակեց հանդիպումը և շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց ժամանակը տրամադրելու համար:                  Հանդիպումն ավարտվեց 1:15</p>
	<p><b><i>Հարցեր և պատասխաններ կառավարության և ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Երևանում կայացած՝ հրապարակման երկրորդ հանդիպումից</i></b></p>
	<p><b><i>Ամսաթիվը և ժամը.</i></b> պրեզենտացիան սկսվեց չորեքշաբթի օրը՝ 2016թ. հունիսի 1-ին, , ժամը 15.10  <b><i>Վայրը</i></b> Հայաթ Փլեյս հյուրանոց, Հանրապետության Հրապարակ, Երևան</p> <p><b><i>Ձեկուցողներ Գեոթիմի կողմից՝</i></b>                  ԴԲ – Դր. Դեյվ Բրիգհամ, Ուորդել Արմսթրոնգ Ինտերնեյշնլ ընկերության Տարածքային տնօրեն (ներկայացնում է հիմնական պրեզենտացիա)                  ԱՄ – Դր. Արմեն Ստեփանյան, Գեոթիմի Կայուն զարգացման գծով ավագ մենեջեր – (ներկայացնում է մասնակիցներին և պատասխանում հարցերին)                  ՀԱ – Դր. Հայկ Ալոյան, Գեոթիմի գլխավոր տնօրեն (պատասխանում է հարցերին)                  Ուս – Ուրիլի Սիբիլսկի, Գեոթիմի Առողջության, բնապահպանության և անվտանգության գծով մենեջեր (պատասխանում է հարցերին)                  ԱնՍ – Աննա Սաղաբալյան, Գեոթիմի Հանրության հետ կապերի մենեջեր (պատասխանում է հարցերին)</p>
	<p><b><i>Հարցեր և պատասխաններ</i></b>                  ԱՄ-ն ներկաներին հարցրեց, թե արդյոք նրանք հարցեր ունեն ԴԲ-ին ՇՄԱԳ և ԲՄԱԳ գործընթացի հետ կապված:</p>
<p>1</p>	<p><b><i>Ռաֆայել Մամբու, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչ</i></b>                  Կարո դ էք ներկայացնել ինչ կարծիքներ են հնչել և ինչպե՞ս են դրանք ներառվել այս փաստաթղթում:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  Ինչպես ԲՄԱԳ-ի հրապարակման նախորդ հանդիպումներին, տեղի է ունենում խորհրդակցություն և դիտողության կամ առաջարկության արդյունքում կատարվում են փոփոխություններ:</p> <p>ԱՄ-ի պատասխանը.                  Նմանատիպ հանդիպումներից բացի ընկերությունը մշտադիտարկում է բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքները, որոնք հնչում են այլ հարթակներում (տպագիր մամուլ, հարցազրույցներ և այլն) և փորձում ամեն ինչ ներառել գործընթացում: Ինչպես օրինակ 2015թ. ԲՄԱԳ հրապարակման հետ կապված հանդիպումների, այնպես էլ այս հանդիպման ընթացքում</p>



	հնչած բոլոր առաջարկների և կարծիքների հիման վրա ԲՄԱԳ-ում կատարվում են փոփոխություններ:
2	<p><i>Մարինա Վարդանյան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Տպավորություն է ստեղծվում, որ ստորգետնյա ջրերի աղտոտման վտանգ կա, ինչ միջոցառումներ են նախատեսվում ռիսկը նվազեցնելու ուղղությամբ:</p> <p>ԴԲ-ի պատասխանը                  Ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունների հետ կապված գնահատումն ընդգրկում էր երկու ուղղություն. 1) աղտոտիչներ, որոնք կարող են հոսել տեղամասից, օրինակ՝ պայթուցիկների մնացորդներից, սրանք հաճախ այն ազդեցություններն են, որոնք հնարավոր չէ մեղմացնել, ուստի պետք է հասկանալ այս նյութերի հետևանքները, և 2) հավանական աղտոտիչներ գործընթացի ժամանակ, որն անհրաժեշտ է կառավարել, որպեսզի նրանք ստորգետնյա ջրերի համակարգ չմտնեն: ԴԲ-ն հստակեցրեց, որ կոնտակտային ջրերը ստորգետնյա ջրերից առանձին են, և որ ստորգետնյա ջրերը կմշտադիտարկվեն աշխատանքների ժամանակ և դրանից հետո, ցանկացած փոփոխություն կգրանցվի և ամբողջովին կընդունվի: Ազդեցությունների գնահատման նպատակը հավանական աղտոտիչները կառավարելուն ուղղված վերահսկիչ միջոցառումների արդյունավետությունը գնահատելն է:</p>
3	<p><i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Ինչպե՞ս է ցիանիդն օգտագործվում տեղամասում:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  ԿՏՀ-ում ցիանիդը ջրով նոսրացվում է և լցվում մանրացված ապարի վրա, որի արդյունքում ստացվում է «հագեցած լուծույթ», որը պարունակում է ոսկի և արծաթ: ԴԲ-ն ավելացրեց, որ ցիանիդի վերամշակում տեղի է ունենում փակ համակարգում</p>
4	<p><i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Ինչպե՞ս է մշտադիտարկվելու ԿՏՀ-ն:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  ԿՏՀ-ում կտեղադրվի պաշտպանիչ-մեկուսչի շերտ, որի անվտանգությունը կստուգվի ցիանիդ կիրառումից առնվազն 2 տարի առաջ: Տեղամասում գործում են անվտանգության ապահովման լրացուցիչ համակարգեր:</p>
5	<p><i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Ո՞վ է իրականացնում մշտադիտարկումը:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  Ողջ մոնիտորինգն իրականացվում է Գեոթիմի կողմից, սակայն մոնիտորինգի բաժինը շահագործող թիմից ակնախ է լինելու: Լիդիան ընկերությունն արդեն հանձն է առել միանալ Ցիանիդի միջազգային օրենսգրքին, կիրականացվի նաև արտաքին աուդիտ:</p> <p>ՈւՄ-ի պատասխանը.                  Ամբողջ գործարանն ու ԿՏՀ-ն օրական 24 ժամ կհսկվի կառավարման կենտրոնի կողմից՝ հատուկ ուշադրություն դարձնելով օգտագործվող ցիանիդի ծավալների վրա և անմիջապես հայտնաբերելով թերությունները: Կլինի նաև ստորգետնյա ջրերը մշտադիտարկելու համակարգ համայնքների կողմից:</p>
6	<p><i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Աշխատատեղերի 30%-ը կհամալրվի տեղացի աշխատողներով, ինչպե՞ս է դա վերահսկվելու, և ինչպե՞ս է կարգավորվելու մնացած 70%-ի հոսքը, և ծրագրի վերջում եկածները մնալու են, թե հետ են վերադառնալու:</p> <p>ՀԱ-ի պատասխանը.                  Ի սկզբանե, առաջնահերթություն տրվելու է անմիջապես Ծրագրի ազդակիր տարածքից մարդկանց աշխատանքով ապահովելուն, այնուհետև Հայաստանի մյուս շրջաններից դիմողներին, եթե տեղացիների քանակը չբավականացնի աշխատատեղերը համալրելու համար: Ենթադրվում է, որ ծրագրի աշխատանքներում կներգրավվի ընդամենը 50 օտարերկրացի:</p>
7	<i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>

	<p><i>Եկածները կմնա՞ն արդյոք, թե հետ կվերադառնան:</i></p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  ԴԲ-ն պարզաբանեց, որ շինարարության փուլում կգործի աշխատողների բնակեցման հիբրիդ մոդելը, սակայն այդ փուլից հետո շահագործման աշխատանքների համար պահանջվող 657 աշխատողների մի մասն ամենայն հավանականությամբ կտեղավորվեն Ջերմուկի հյուրանոցում: Հանքարդյունահանումն ավարտելուց երկու տարի առաջ կկազմվի աշխատակիցների կրճատման պլանը:</p> <p>ԱնՍ-ի առաջարկությունը                  ԱնՍ-ն առաջարկեց, որ նախորդ դիտողությունների հետ կապված անհրաժեշտ է հստակեցնել, որ ջուրը ԿՏՀ-ից չի մտնելու պատիվ մաքրման համակարգ:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  Պասիվ մաքրման համակարգը կվերամշակի կոնտակտային ջրերը: ԿՏՀ-ից ջուրն անմիջապես չի բաց թողվելու ջրային հոսքերի մեջ, շահագործումն ավարտելուց հետո երկու տարի շարունակ նոսր ցիանիդի խառնուրդը կպարզաջրվի՝ ցիանիդը հեռացնելու համար: Այնուհետև, հանքի փակումից 2 տարի անց ԿՏՀ-ի տարածքից բաց կթողնվի ջուրը, որը կանցնի ջրերի մաքրման պասիվ համակարգ: Պասիվ համակարգից դուրս եկող ջուրը համապատասխանելու է ջրի որակի սահմանված նորմերին: ԴԲ-ն ավելացրեց, որ սա ընդունված գործընթաց է բոլոր այն ծրագրերի համար, որոնք ունեն արտադրության մեջ գործ ունեն ցիանիդի հետ:</p>
8	<p><i>Գևորգ Թորոսյան, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ</i>                  Կլիմի՝ արդյոք ազդեցություն Ջերմուկի հանքային ջրերի վրա:</p> <p>ԱՍ-ի պատասխանը.                  Կատարվել է տեղամասից և Ջերմուկի հանքային ջրերի գործարանը սնող ջրերից վերցված նմուշների իզոտոպային անալիզ: Անալիզի պատասխանները ցույց են տալիս, որը ջրի այս երկու համակարգերն իրարից ամբողջովին առանձին են, և Ծրագիրը Ջերմուկի ջրերի վրա ազդեցություն չի ունենա:</p>
9	<p><i>Գևորգ Թորոսյան, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ</i>                  Ե՞րբ հանքը կարտադրի առաջին ոսկի:</p> <p>ՀԱ-ի պատասխանը.                  Ակնկալվում է 2018թ. հունիսին</p>
10	<p><i>Արմինե Եղիզարյան, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ</i></p> <p>Արդյոք հողատերերի հետ բանակցությունները ներառում էին հողի դիմաց շուկայական գնով վճարումը:</p> <p>ՆԼ-ի պատասխանը.                  Հողի գնման վերաբերյալ քննարկումներն իրականացվել են ՎԶԵԲ-ի և ՄՖԿ-ի կողմից կազմված հողի ձեռքբերման ուղեցույցի համաձայն: Բանակցություններն անց են կացվել անմիջապես հողատերերի հետ, և պահանջվող հողերի 98%-ը արդեն գնված է: Երեք հողակտոր անցնում են համապատասխան իրավական գործընթաց:</p>
11	<p><i>Արմինե Եղիզարյան, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ</i></p> <p>Առաջարկվե՞լ է արդյոք «հող՝ հողի դիմաց» տարբերակը:</p> <p>ՆԼ-ի պատասխանը.                  Բանակցությունների առաջին փուլում առաջարկվել է հող՝ հողի դիմաց տարբերակը:</p>
12	<p><i>Արմինե Եղիզարյան, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ</i></p> <p>Որևէ մեկը հետաքրքրվա՞ծ էր:</p> <p>ՆԼ-ի պատասխանը.                  Սկզբում շատ քչերն էին (երևի 6 տնտեսություն) հետաքրքրված այդ տարբերակով, սակայն տեսնելով, որ մարդկանց</p>

	<p>վճարում են իրենց հողի դիմաց, շատ մարդիկ նախընտրեցին, որ իրենց հողի դիմաց գումար վճարեն:</p>
<p>13</p>	<p><i>Արմինե Եղիգարյան, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ</i>                  Հնագիտական հուշարձանների գնահատում իրականացվել է արդյոք և պատրաստվո՞ւմ էք արդյոք դուք այն շարունակել իրականացնել հանքի շահագործման ընթացքում:</p> <p>ԱՄ-ի պատասխանը.                  Առ այսօր իրականացվել են հնագիտական տեղամասերի գնահատումներ և հետագայում ևս աշխատանքներ կիրականացվեն: Ցանկացած ժամանակ տեղամասում կլինի առնվազն մեկ հնագետ: Կա նաև պատահական գտածոների ընթացակարգ:</p> <p>ՀԱ-ի պատասխանը.                  Տեղամասում սկսվել է նախնական շինարարական աշխատանքները տեղում ներկա է հնագիտական փորձագետը, ով վերահսկում է կատարվող աշխատանքները:</p>
<p>14</p>	<p><i>Մարինա Վարդանյան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Որո՞նք են լանդշաֆտի վրա ազդեցությունների մեղմացման հիմնական միջոցառումները:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  Հանքի ռեկուլտիվացման պլանում փոփոխություններ չեն կատարվել, և կատարվել է վերականգնման բոլոր պլանների ծախսերի հաշվարկը: Դրանց ֆինանսավորումը կարող է կատարվել հանքարդյունահանման ավարտից հետո: Կլինեն բուսականության վերականգնման որոշ գործողություններ ծրագրի անմիջական ազդեցության տարածքներից դուրս տարածքներում: Ստեղծվել են տնկարաններ և որոշ ծառեր օգտագործվում են ազդեցությունը մեղմացնելու նպատակով: ԴԲ-ն ավելացրեց, ինչ վերաբերում է բարձրալեռնային կենսամիջավայրերին, նրանք բարդ պայմաններ ունեն նոր աճ ապահովելու համար, և այս առումով Սևանի հերբարիումում իրականացվող աշխատանքը կօգնի լուծել այս խնդիրը:</p> <p>ՈւՍ-ի պատասխանը.                  ԴԱԼ-ը արհեստական ստեղծված ապարակույտ է, որի վրա անհրաժեշտություն կլինի ապահովել բուսածածկույթ տարբեր թեքությունների վրա: ՈւՍ-ն շեշտեց, որ ընկերությունը չի սպասելու մինչև վերականգնման փուլը՝ այլ շահագործման ընթացքում իրականացնելու է համապատասխան փորձարկումներ:</p>
<p>15</p>	<p><i>Նարեն Չանուզան, USAID-ի ներկայացուցիչ</i>                  Ինչի՞ց են բխում Ծրագրի նախագծում փոփոխությունները:</p> <p>ԴԲ-ի պատասխանը.                  Փոփոխությունները պայմանավորված են 2015թ. հուլիսին ԲՄԱԳ-ի վերջին հրապարակումից հետո իրականացված Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացմամբ: ԴԲ-ն ավելացրեց, որ սա հանքարդյունաբերությունում սովորական գործընթաց է, դա բխում է ծրագրի զարգացմանը զուգընթաց կապիտալ ծախսերի վերանայման անհրաժեշտությունից:</p>
<p>16</p>	<p><i>Արման Բարխուդարյան, ՄՖԿ ներկայացուցիչ</i>                  Որքա՞ն կլինի անուղղակի աշխատատեղերի թիվը:</p> <p>ՀԱ-ի պատասխանը.                  Հանքարդյունաբերական աշխատանքների դեպքում բազմապատկիչ գործոնը կազմում է մոտավորապես 4 կամ 5 անուղղակի աշխատանք տեղամասում 1 աշխատանքի դիմաց:</p> <p>ՄՖԿ ներկայացուցիչ՝ Արման Բարխուդարյան                  Արդյո՞ք սա տեղի բնակչության 50% է կազմում:</p> <p>ՀԱ-ի պատասխանը.                  Հավանաբար ավելի շատ.</p> <p>ԴԲ-ի պատասխանը.</p>

	Նշված աշխատատեղերը ներառելու են ճաշարանում, մատակարարման, վառելիքի հարցերով, հյուրանոցում աշխատող անձինք, մեխանիկներ և մի շարք այլ ծառայություններ:
17	<p><i>Արման Բարխուդարյան, ՄՖԳ ներկայացուցիչ</i> Որքա՞ն մարդու է վճարվել ձեռքբերված հողամասերի դիմաց:</p> <p>ՀԱ-ի պատասխանը. 1-ին և 2-րդ փուլերի համար վճարվել է 140 հողատիրոջ, իսկ 3-րդ և 4-րդ փուլերի համար՝ 35 հողատիրոջ:</p> <p>ԱՄ-ն եզրափակեց հանդիպումը և շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց հատկացրած ժամանակի համար: Հանդիպումն ավարտվեց ժամը 17.00</p>
	<p><b>Հարցեր և պատասխաններ հասարակական կազմակերպությունների, փորձագիտական խմբերի և հանրադրյունաբերական ընկերությունների մասնակցությամբ՝ Երևանում կայացած ԲՄԱԳ-ի հրապարակման վերաբերյալ երրորդ հանդիպումից</b></p>
	<p><b>Անսաթիվը և ժամը.</b> պրեզենտացիան սկսվեց հինգշաբթի օրը՝ 2016թ. հունիսի 2-ին, , ժամը 15.10 <b>Վայրը</b> Հայաթ Փլեյս հյուրանոց, Հանրապետության Հրապարակ, Երևան</p> <p><b>Զեկուցողներ Գեոթիմի կողմից՝</b> ԴԲ – Դր. Դեյվ Բրիգնալ, Ուորդել Արմսթրոնգ Ինկերնեյշնլ ընկերության Տարածքային տնօրեն (ներկայացնում է հիմնական պրեզենտացիա) ԱՄ – Դր. Արմեն Ստեփանյան, Գեոթիմի Կայուն զարգացման գծով ավագ մենեջեր – (ներկայացնում է մասնակիցներին և պատասխանում հարցերին) ՀԱ – Դր. Հայկ Ալոյան, Գեոթիմի գլխավոր տնօրեն (պատասխանում է հարցերին) Ուս – Ուլրիխ Սիբիլսկի, Գեոթիմի Առողջության, բնապահպանության և անվտանգության գծով մենեջեր (պատասխանում է հարցերին) ՆՂ – Նառա Ղազարյան, Գեոթիմի Սոցիալական զարգացման ծրագրերի գծով մենեջեր (պատասխանում է հարցերին) ԱնՍ – Աննա Սաղաբալյան, Գեոթիմի Հանրության հետ կապերի մենեջեր (պատասխանում է հարցերին)</p>
	<p><b>Հարցեր և պատասխաններ</b></p>
1	<p>&lt;&lt;Civil Voice&gt;&gt; ՀԳ-ի ներկայացուցիչ՝ <i>Բաբկեն Հարությունյան</i> Կարո՞ղ եք որոշակի տեղեկություններ ներկայացնել նախնական մոնիտորինգի նոր կայանի վերաբերյալ. Մի բան է մոնիտորինգի իրականացնելու պարտավորություն ստանձնել թղթի վրա, այլ բան է համոզվել, որ մոնիտորինգն իրականացվում է:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. Հանքարդյունաբերության ոլորտում լավագույն գործելակերպը բնապահպանական կառավարման ապահովումն է, որը սերտորեն կապված է ԲՄԱԳ-ի հետ, ինչպես նաև նախնական մոնիտորինգի կայանի առկայությունը՝ շրջակա համայնքներում մոնիտորինգ իրականացնելու նպատակով: ԴԲ-ն ավելացրեց, որ նախնական մոնիտորինգի վայրը միտումնավոր է որոշված համայնքից հեռու: Այն գտնվում է տեղամասին շատ մոտ, որը թույլ կտա ցանկացած բնապահպանական խնդիր հայտնաբերել մինչև այն հնարավորություն կունենա ազդեցություն ունենալ շրջակա բնակավայրերի վրա: ԴԲ-ն նշեց, որ նախնական մոնիտորինգի կայանը կգնահատի տեղամասից արտանետվող աղմուկի, փոշու և վիբրացիայի մակարդակները, և որ բնապահպանական կառավարման համակարգերը կկապվեն ԲՄԱԳ-ում սահմանված մակարդակների հետ:</p>
2	<p><i>Հասմիկ Մկրտումյան, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացուցիչ</i></p> <p>Արդյո՞ք Սևանի հեբբարիում տարված՝ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները մնալու են այնտեղ, թե դրանք կվերադարձվեն տեղամաս:</p> <p>ԱՄ-ի պատասխանը. Լիդիան ընկերության նպատակն է տեղամասում չունենալ բուսատեսակների պոպուլյացիայի հաշվեկշռի ոչ մի կորուստ, միաժամանակ անշուշտ ձգտում ենք ապահովել մի շարք կարևոր տեսակների պոպուլյացիայի աճ: ԱՄ-ն ավելացրեց, որ սրան հասնելու համար անհրաժեշտ է հեբբարիումում իրականացնել մի շարք գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքները Ամուլսարի Ծրագրում՝ երաշխավորելու, որ տեղամասում տարածքների վերականգնումը հաջողվել</p>

	Է:
3	<p><i>Երիտասարդ բնագիտական իրավաբանների միության ներկայացուցիչ՝ Էրիկ Գրիգորյան</i> Ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունները բացասական ազդեցություններ առաջացնելու ամենամեծ հավանականությունն ունեն, որը կարող է Ծրագրի շահագործման ավարտից հետո տասնամյակներ շարունակվել: Չե՞ք կարծում արդյոք, որ լրացուցիչ հետազոտություններ է անհրաժեշտ իրականացնել՝ ստորգետնյա ջրերի վրա ազդեցություններն ամբողջովին հասկանալու համար: Հիմնական մտահոգությունը Որոտանի ավազանի վրա ազդեցությունն է և Սևանա լճի ջրհավաք ավազանի վրա ազդեցությունը: Արդյո՞ք դուք իրականացրել եք ստորգետնյա ջրերի վերաբերյալ տվյալների խաչաձև ստուգում:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. Ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունների երկրորդ ուսումնասիրություն չի իրականացվել, սակայն հանքի նախագծման գործում ներգրավված անկախ խորհրդատվական երկու ընկերություն ուսումնասիրել են կազմված հաշվետվությունը և տվել ստացված արդյունքների վերաբերյալ իրենց համաձայնությունը: Վերանայման այս գործընթացը շարունակական է լինելու:</p> <p>ԱՍ-ի պատասխանը. Մենք կփորձենք մշտապես բարելավել մեր գիտելիքները, թե ինչպես են ստորգետնյա ջրերն աշխատում:</p>
4	<p><i>Վահե Վարդանյան, Դանդի Փրիշու Մեթալս ՓԲԸ-ի ներկայացուցիչ</i> Ինչպե՞ս եք դուք գնահատում Ջերմուկի հանքային ջրերի գործարանը սնող ստորգետնյա ջրերի վրա Ծրագրի հավանական ազդեցությունը:</p> <p>ԱՍ-ի պատասխանը. Իրականացվել է երկրաբանական և իզոտոպային գնահատում: Երկրաբանական գնահատումը ցույց տվեց, որ Ամուլսարի տեղամասի և Ջերմուկի միջև կապ չկա: Իզոտոպային անալիզը հաստատեց, որ ստորգետնյա ջրերի երկու տեղամասերն իրար հետ կապված չեն: ԱՍ-ն ավելացրեց, որ ընկերությունը պարտավորվում է իրականացնել լրացուցիչ հետազոտություն Ծրագրի շահագործման աշխատանքների մեկնարկից հետո:</p>
	<p><i>Սուրեն Երիցյան, Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ</i> Ինչպե՞ս եք որոշում փոխակրիչի անցումային կետերի վայրերը:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. ԴԲ-ն հղում ներկայացրեց փոխակրիչի սխեմային, նախընտրելի չորս կետերը, որոնք նախատեսում են անցումներ պետական ճանապարհի, հանք մտնող ճանապարհի, ինչպես նաև հետիոտնային ճանապարհի և կենդանիների տեղաշարժի համար: Վերջին երկուսն այս պահին դեռևս վերջնականապես որոշված չեն:</p> <p>ԱՍ-ի պատասխանը. Ընկերությունը սերտորեն համագործակցել է տեղական համայնքների հետ՝ որոշելու առնվազն 3 անցումների տեղադիրքը:</p>
6	<p><i>Սուրեն Երիցյան, Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ</i> Ի՞նչ գործողություններ են իրականացվելու կոնտակտային ջրերի հետ կապված՞</p> <p>ԴԲ-ի պատասխանը. Կոնտակտային ջուրը դա ցանկացած այն ջուրն է, որ հոսում է Ծրագրի գործողությունների հետևանքով խախտված ցանկացած հողատարածքով: ԴԲ-ն պարզաբանեց, որ շատ կարևոր է համոզվել, որ Ծրագրի տեղամասը առանձնացած է առուններով՝ ցանկացած մտնող ջուր հանքից հեռացնելու համար: ԴԲ-ն ավելացրեց, որ տեղամասում հավաքված ջրերի մեծ մասը կշրջանառվի հանքի սահմաններում, սակայն հինգերորդ տարվանից սկսած ԴԱԼ-ի ստորին ավազանում հավաքված ջուրը ինքնահոս կերպով կդատարկվի ԿՏՀ-ում, իսկ ավելցուկային ջրերը կուղղորդվեն պասիվ մաքրման կայան: ԴԲ-ն նշեց, որ Ծրագրի շահագործման ողջ ընթացքում դեպի մակերևութային ջրեր ոչ մի այլ ջրթող չի նախատեսվում: ԴԲ-ն ավելացրեց, որ հանքարդյունահանումից հետո ԿՏՀ-ն կշարունակի ոսկի և արծաթ տարրալուծել, և որ նոր պասիվ մաքրման համակարգ կտեղադրվի և կմշտադիտարկվի մինչև ջրի որակը հասնի թույլատրելիին:</p>

7	<p><i>ԳեոՊրո Մայնինգ ընկերության ներկայացուցիչ՝ Անուշ Գևորգյան</i></p> <p>Ի՞նչ տեխնոլոգիա էք դուք կիրառելու ջուրը ցիանիդից մաքրելու համար:</p> <p>ՈւՍ-ի պատասխանը. Ցիանիդն օգտագործվելու է շատ նոսր լուծույթով, և համապատասխան համակարգով անցնելիս այն ավելի է պակասում, օգտագործվում է ԿՏՀ-ում, որն ամբողջությամբ պատված է պաշտպանիչ շերտով: Կատարվելու է մշտադիտարկում:</p>
8	<p><i>Բնապահպանական անկախ փորձագետ Գալուստ Նանյան</i></p> <p>Որքա՞ն հողակտոր դեռևս կշարունակի Ծրագրի ազդեցությունը կրել դրա շահագործումից հետո:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. Շահագործման փուլի ավարտից 2 տարի առաջ կներկայացվի վերականգնման մանրակրկիտ պլան, որը ցույց կտա, թե տեղամասն ինչ տեսք ունի շահագործման ավարտից հետո: ԴԲ-ն ավելացրեց, որ ԴԱԼ-ի և ԿՏՀ-ի հետ կապված մնացած թմբերը կկլորացվեն, կլցվեն հողով, կվերականգնվի բուսականությունը և վերջապես կարող է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով: ԴԲ-ն պարզաբանեց, որ հանքափոսերը կլցափակվեն մինչև այն մակարդակի, որ հնարավոր լինի դրանք պահել չոր վիճակում: Էրատոյի հանքափոսը կլցափակվի մինչև բնական մակարդակի:</p>
9	<p><i>Բնապահպանական անկախ փորձագետ Գալուստ Նանյան</i></p> <p>Դուք ունե՞ք տարածքի նախնական ծավալներ, որոնք կմնան խախտված վերականգնումից հետո:</p> <p>ԱՄ-ի պատասխանը. Միայն բացահանքերի տարածքը կմնա խախտված, որը մոտավորապես 110 հեկտար է կազմում, տեղամասի մնացած մասը կբերվի օգտագործելի վիճակի:</p>
10	<p><i>Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Դավիթ Շինդյան</i></p> <p>Ի՞նչ էք պատրաստվում անել Ծրագրի տեղամասում հավաքված կենցաղային թափոնները: Դուք օգտագործելու՞ եք աղբավայր:</p> <p>ԴԲ-ի պատասխանը. Միայն ոչ վտանգավոր թափոնները կտեղադրվեն աղբավայրում: Թափոնների կառավարման մանրամասները ներառված են թափոնների կառավարման պլանում: ԴԲ-ն հստակեցրեց, որ միայն ոչ վնասակար և չվերամշակվող թափոնները կտեղադրվեն աղբավայրում, արդյունքում թափոնը պետք է լինի համեմատաբար չոր և կեղտաջրեր չեն առաջացնում: ԴԲ-ն ավելացրեց, որ ԿՏՀ-ի տարածքում առաջացող վտանգավոր թափոնները կվերամշակվեն կամ կհեռացվեն տեղամասից:</p> <p>ՈւՍ-ի պատասխանը. Տեղամասում կլինեն վտանգավոր թափոնների բջիջներ, սակայն դրանք աղբավայրեր չեն լինի և դրանք կնախագծվեն այնպես, որ համապատասխանեն ՎՋԵԲ- չափանիշներին: ՈւՍ-ն ավելացրեց, որ թափոնները մշակելու համար հնարավոր է տեղամասում տեղադրվի աղբայրիչ գործարան:</p>
11	<p><i>Տիգրան Սադոյան, ԳեոՊրո Մինինգ Գոլդ ՄՊԸ-ի ներկայացուցիչ</i></p> <p>Հաշվի առե՞լ էք արդյոք արտակարգ իրավիճակների դեպքում ազդեցությունները, և կա՞ն արդյոք ինչ-որ միջոցառումներ դրանց հետ կապված:</p> <p>ՈւՍ-ի պատասխանը. Մշակվել է արտակարգ իրավիճակների կառավարման պլան, որի հիմքում ընկած է աշխարհում գործող տարբեր ծրագրերի փորձը: ՈւՍ-ն ավելացրեց, որ կլինի նաև բժշկական օգնության պլան:</p>
12	<p><i>Տիգրան Սադոյան, ԳեոՊրո Մինինգ Գոլդ ՄՊԸ-ի ներկայացուցիչ</i></p> <p>Ի՞նչ պաշտպանիչ միջոցառումներ էք նախատեսում ԿՏՀ-ի պաշտպանիչ շերտի վթարի դեպքում:</p>

# ԲՄԱԳ հանդիպումների արձանագրություն



<p>ՈւՄ-ի պատասխանը. Առկա է ցիանիդի կառավարման պլան, և ընկերությունը պարտավորվել է միանալ ցիանիդի միջազգային օրենսգրքին: ՈւՄ-ն ավելացրեց, որը ընկերությունը վստահ է, որ հարթակը շատ լավ կծածկվի ցիանիդի արտահոսքից խուսափելու նպատակով:</p>
<p><i>ԱՄ-ն շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց հատկացրած ժամանակի և նրանց կողմից բարձրացված հարցերի համար: Հանդիպումն ավարտվեց ժամը 4.40-ին:</i></p>

## ԲՄԱԳ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ, 31 ՄԱՅԻՄԻ, 2016, ՋԵՐՄՈՒԿ

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ՀԱՄԱՅՆՔ
1	Շուշան Հովսեփյան	Ջերմուկ
2	Ռոբերտ Ղազարյան	Սարավան
3	Լիլիթ Մկրտչյան	Գնդեվազ
4	Սևակ Հարությունյան	Ջերմուկ
5	Անյուտա Հարությունյան	Սարավանի գյուղապետարան
6	Լուսաբեր Դավթյան	Գնդեվազ
7	Գոռ Դավթյան	Ջերմուկ
8	Սամվել Մարգարյան	Ջերմուկ
9	Նարեկ Գրիգորյան	Ջերմուկ
10	Տեր Գալուս քահանա Սահակյան	Ջերմուկ
11	Ռոբերտ Ստեփանյան	Ջերմուկ
12	Քրիստինե Հարությունյան	Գորայքի գյուղապետարան
13	Նելլի Գրիգորյան	Գորայք
14	Մարիետա Գրիգորյան	Գորայքի գյուղապետարան
15	Արայիկ Մկրտչյան	Ջերմուկ
16	Մարտուն Թադևոսյան	Գորայքի դպրոցի տնօրեն
17	Արմեն Գրիգորյան	Ջրային կենտրոնի տնօրեն



18	Գարիկ Եղյան	Գնդեվազ
19	Գայանե Կարապետյան	Կեչուտ, Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց
20	Արտավազ Թադևոսյան	Կեչուտ
21	Մխիթար Այվազյան	Ջերմուկ
22	Մինաս Արշակյան	Գնդեվազ
23	Հակոբ Հակոբյան	Գնդեվազ
24	Վարուժան Անտոնյան	Գորայք
25	Վահան Անտոնյան	Գորայք
26	Տիգրան Առուստամյան	Գորայք
27	Վարդան Բարսեղյան	Գնդեվազ
28	Կարեն Աղաբեկյան	Գնդեվազ
29	Պարույր Բադասյան	Ջերմուկ
30	Տիգրան Վարդանյան	Ջերմուկ
31	Գարեգին Կարապետյան	Սարավան
32	Վահան Մկրտչյան	Գնդեվազ
33	Մխիթար Արշակյան	Գնդեվազ
34	Արտակ Համբարձումյան	Գնդեվազ
35	Աշոտ Փաղունց	Սարավան
36	Գերասիմ Անդրեասյան	Գնդեվազ
37	Էմմա Հակոբյան	Սարավանի դպրոց
38	Անրի Գրիգորյան	Էկոլայն
39	Սևան Ղազարյան	Երևան
40	Նունուֆար Ֆրանգուլյան	Գնդեվազ

41	Մարինե Սուքիասյան	Գնդեվազ
42	Սյուզաննա Ավետիսյան	Ջերմուկ, “Երիտասարդական կենտրոն”
43	Վահե Մանուկյան	Ջերմուկ, ռեստորան “Ֆորսե”
44	Արմեն Հարությունյան	Ջերմուկ
45	Վարդան Սարգսյան	Ջերմուկ
46	Զառա Գևորգյան	Սարավան
47	Աննա Աղաջանյան	Գորայք
48	Մարինե Խուրշուդյան	Գնդեվազ
49	Ալվարդ Սարգսյան	Գնդեվազ
50	Լատիրա Եղոյան	Գնդեվազ
51	Վարդան Հովսեփյան	Ջերմուկ
52	Արսեն Գառնիկյան	Ջերմուկ
53	Գրիգոր Հարությունյան	Ջերմուկ
54	Պավլիկ Հարությունյան	Ջերմուկ
55	Տիգրան Գասպարյան	Սարավան
56	Գևորգ Հայրապետյան	Ջերմուկ
57	Ռուզաննա Գրիգորյան	Ջերմուկ
58	Արմեն Դանիելյան	Ջերմուկ
59	Նորայր Ալեքսանյան	Ջերմուկ
60	Արևհատ Քոլայան	Ջերմուկ
61	Լուսիկ Սարգսյան	Ջերմուկ
62	Արտակ Մովսիսյան	Ջերմուկ
63	Արման Թադևոսյան	Ջերմուկ

64	Վահե Պապոյան	Ջերմուկ
65	Մամիկոն Թադևոսյան	Գնդեվազ
66	Անդրանիկ Եղոյան	Գնդեվազ
67	Վանիկ Զոհրաբյան	Ջերմուկ
68	Բենիկ Առաքելյան	Գնդեվազ
69	Նվեր Մկրտչյան	Գնդեվազ
70	Նարինե Հարությունյան	Ջերմուկ
71	Լիանա Պապոյան	Ջերմուկ
72	Լիլիթ Պետրոսյան	Ջերմուկ
73	Հարութ Հարությունյան	Սարավան
74	Տարոն Ղազարյան	Սարավան
75	Ազատ Հովակիմյան	Ջերմուկ
76	Ռուզաննա Ստեփանյան	Ջերմուկ
77	Արտակ Բագրատյան	Կեչուտ
78	Վարդան Եղյան	Գնդեվազ
79	Արամ Մկրտչյան	Գնդեվազ
80	Հայկազ Հարությունյան	Գնդեվազ
81	Աննա Թադևոսյան	Կեչուտ
82	Խաչիկ Եղոյան	Սարավան
83	Ռուզան Ասատրյան	Սարավանի գյուղապետարան
84	Արտակ Նիկողոսյան	Ջերմուկ, Գազի ծառայություն
85	Մխիթար Առուստամյան	Գորայք
86	Մարտիկ Պողոսյան	Գորայք

87	Տիգրան Հարությունյան	Գորայք
88	Գոռ Հակոբջանյան	Գնդեվազ
89	Նարեկ Արշակյան	Գնդեվազ
90	Արսեն Ստեփանյան	Գնդեվազ
91	Մխիթար Ճատունց	Գորայք
92	Առուստամ Առուստամյան	Գորայք
93	Արթուր Սկրտչյան	Ջերմուկ
94	Արա Շաքարյան	Ջերմուկ
95	Նարեկ Խաչատրյան	Խորենի
96	Նինա Ավանեսյան	Ջերմուկ

**ԲՄԱԳ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ, 1 ՀՈՒՆԻՍԻ, 2016, ԵՐԵՎԱՆ**

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
1	Անրի Գրիգորյան	Էկոլայն
2	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
3	Արթուր Մինասյան	“Շրջակա միջավայրի ազդեցության կենտրոն” ՊՈԱԿ
4	Արմինե Եղիզարյան	Ասիական զարգացման բանկ, բնապահպանության գծով մասնագետ
5	Նարեն Չանմուզան	USAID
6	Մարինա Վարդանյան	USAID
7	Ռաֆայել Սամբու	Երևանում ԱՄՆ դեսպանություն
8	Կարեն Ազարյան	ԵՄ պատվիրակություն
9	Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկ
10	Ալեքս Հովակիմյան	Երևանում ԱՄՆ դեսպանություն

11	Արման Բարխուդարյան	Միջազգային ֆինանսական կորպորացիա
12	Արտաշես Դավթյան	Երևանում Միացյալ թագավորության դեսպանություն
13	Գևորգ Թորոսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

**ԲՄԱԳ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ, 2 ՀՈՒՆԻՍԻ, 2016, ԵՐԵՎԱՆ**

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
1	Էրիկ Գրիգորյան	“Երիտասարդ բնապահպան-իրավաբանների ասոցիացիա” ՀԿ
2	Անրի Գրիգորյան	Էկոլայն
3	Գալուստ Նանյան	Անկախ փորձագետ
4	Լյուբա Բայյան	“Հայաստանի թռչունների պահպանման միություն” ՀԿ
5	Արմինե Դավթյան	“Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ” ՓԲԸ
6	Անի Քեշիշյան	168 ժամ
7	Սիրանուշ Եղիազարյան	ՄեդիաՄաքս
8	Անուշ Գևորգյան	“GeoProMining Gold” ՍՊԸ
9	Տիգրան Սադոյան	“GeoProMining Gold” ՍՊԸ
10	Վահե Վարդանյան	“Dundee Precious Metals” ՓԲԸ
11	Անի Սարգսյան	“Թեդուտ” ՓԲԸ
12	Սուրեն Երիցյան	“Թեդուտ” ՓԲԸ
13	Բարկեն Հարությունյան	“Սիվիլ վոյս” ՀԿ
14	Էդուարդ Մխիթարյան	ԳԱԼԱ հեռուստաընկերություն
15	Տիգրան Ղասաբյան	ԳԱԼԱ հեռուստաընկերություն
16	Գեորգի Ֆայվուշ	ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ
17	Հասմիկ Մկրտումյան	“Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ” ՓԲԸ
18	Արմինե Թամրազյան	ՀՀ հեռուստաընկերություն

ԲՍԱԳ հանդիպումների արձանագրություն



*your earth our world*

19	Դավիթ Շինդյան	“Թեղուտ” ՓԲԸ
20	Նաիրա Բաղայան	ԱրմԻնֆո
21	Լուսինե Ղարիբյան	Երկիր Մեդիա